Ա Ռ Ա Ր Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 184-Ա, ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 185-Ա, ՄԱՐՏԻ 16-Ի ԹԻՎ ԹԻՎ 186-Ա, 187-Ա ԵՎ ՄԱՐՏԻ 18-Ի ԹԻՎ ԹԻՎ 195-Ա, 196-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 184-Ա և 185-Ա որոշումների վերնագրերում և բովանդակությունների մեջ փոփոխվող իրավական ակտերն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթին, համաձայն որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը: Բացի այդ, թիվ 184-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի ոչ թե 1-ին, այլ՝ 3-րդ կետին:

Թիվ 186-Ա որոշման բովանդակության մեջ անհրաժեշտ էր գրառում կատարել նաև համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ վերջինիս փոխարինողի վերաբերյալ: Բացի այդ, որոշման մեջ կիրառվել են հապավումով և կրճատ գրառված բառեր: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:

Թիվ 187-Ա որոշման նախաբանում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով:

Որոշման բովանդակության մեջ «14/1» թվից հետո նշված «հասցեն» բառի փոխարեն անհրաժեշտ էր գրառել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետով նախատեսված անշարժ գույքի վավերապայմանը՝ անվանումը:

Թիվ 195-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված:

Թիվ 195-Ա որոշման 3-րդ ենթակետում նշված «գլխավոր մասնագետ», թիվ 196-Ա որոշման 1-ին ենթակետում՝ «բաժնի պետ», 2-րդ ենթակետում՝ «գլխավոր մասնագետ», 3-րդ ենթակետում՝ «առաջատար մասնագետ» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «լիազորությունները կատարող» բառերը:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
14.04.2022թ.